Հ Ա Շ Վ Ե Տ Վ ՈՒ Թ Յ ՈՒ Ն

Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարության իրավաբանական անձանց պետական ռեգիստրի գործակալության կողմից 2013 թվականի ընթացքում կատարած աշխատանքների վերաբերյալ

Հաշվետու ժամանակահատվածում ՀՀ արդարադատության նախարարության աշխատակազմի իրավաբանական անձանց պետական ռեգիստրի գործակալության կողմից գրանցվել է 2 արտադրական կոոպերատիվ, 3180 ՍՊԸ, 74 ՓԲԸ, 1 ՊՈԱԿ, 69 ՀՈԱԿ, 12139 անհատ ձեռնարկատեր: Նույն ժամանակահատվածում գրանցվել է 312 հասարակական կազմակերպություն, 3 կուսակցություն, 8 իրավաբանական անձանց միություն, 95 հիմնադրամ, 28 արհեստակցական կազմակերպություն: 2013 թ. իրականացվել են 55 վերակազմակերպումներ (21 միացում և 34 առանձնացում), ընդ որում՝ ընդլայնվել են 21, դադարել են 22, փոփոխվել են 34, ստեղծվել են 43 իրավաբանական անձինք: Իրականացվել է իրավաբանական անձանց և նրանց առանձնացված ստորաբաժանումների փոփոխությունների 8129 գրանցում և հաշվառում, անհատ ձեռնարկատերերի փոփոխությունների 3462 հաշվառում, անհատ ձեռնարկատերերի գործունեության դադարման 11400 և իրավաբանական անձանց լուծարման 325 գրանցում և հաշվառում: Բոլոր գրանցումներն ու հաշվառումները կատարվել են օրենքով սահմանված ժամկետներում: Իրականացվել է նաև իրավաբանական անձանց պետական միասնական գրանցամատյանից մեկ սուբյեկտի վերաբերյալ պետ. ռեգիստրում պահվող տեղեկությունների տրամադրում՝ 14870, որից 2235 անվճար: Հաշվետու ժամանակահատվածում իրավաբանական անձանց պետական ռեգիստրի գործակալությունը իրականացրել է www.azdarar.am կայք էջերի վարումը և հրապարակել է 18035 հայտարարություն:


Գրանցված կազմակերպությունների բաշխվածությունը
Առևտրային
Ոչ առևտրային
3%
97%

Որից՝


Անհատ ձեռնարկատեր / առևտրային ընկերություն հարաբերություն
Անհատ Ձեռնարկատեր
Առևտրային ընկերություն
24%
76%

Հաշվետու ժամանակահատվածում զգալի աշխատանքներ են կատարվել կատարողական և աշխատանքային կարգապահության ամրապնդման ուղությամբ: Իրականացված բարեփոխումների արդյունքում զգալիորեն բարելավել է Գործակալության գործունեության արդյունավերտությունը:

Ձեզ ենք ներկայացնում 2013թ. ընթացքում առանձին տեսակների գրառումների կատարման տևողության և քանակների վիճակագրություն

h/h	Կազմակերպաիրավական տեսակ	Նվազագույն (րոպե)	Առավելագույն (րոպե)	Միջին (րոպե)	Ընդամենը
1	Անհատ ձեռնարկատեր (Ա/Ձ)	1.500	41,514.283	6.100	12134
2	Սպառողական կոոպերատիվ (Ս/Կ)	2,576.100	20,050.583	4,224.617	34
3	Փակ բաժնետիրական ընկերություն (ՓԲԸ)	16.450	21,494.000	2,982.900	66
4	Հասարակական կազմակերպություն (ՀԿ)	16.450	24,118.183	2,892.267	311

ՍՊԸ-ների գրանցման մանրամասն վիճակագրություն

ԻԱ տեսակ	Նվազագույն (րոպե)	Առավելագույն (րոպե)	Միջին (րոպե)	Ընդհամենը
Ստանդարտ կանոնադրություն անվանման հաստատմամբ	16.233	7,167.150	76.950	17
Ոչ ստանդարտ կանոնադրություն անվանման հաստատմամբ	2,431.383	17,026.983	3,027.700	8
Ստանդարտ կանոնադրություն առանց անվանման հաստատման	4.133	176,751.250	13.333	2537
Ոչ ստանդարտ կանոնադրություն առանց անվանման հաստատման	15.717	60,693.067	2,995.183	572







Առևտրային կազմակերպությունների բաշխվածությունը ըստ մարզերի



Փողերի լվացման և ահաբեկչության ֆինանսավորման դեմ պայքարում ներգրավված ՀՀ տարբեր գերատեսչությունների և ՀՀ Կենտրոնական բանկի ֆինանսական դիտարկումների կենտրոնի միջև միասնական տեղեկատվական տիրույթի ստեղծման համար կազմավորվել է աշխատանքային խումբ, որի հերթական հանդիպումը տեղի է ունեցել 2013 թվականի հոկտեմբերի 21-ին՝ պետական ռեգիստրի գործակալության աշխատակիցների մասնակցությամբ: Միասնական տեղեկատվական տիրույթի համակարգի հարցումների ծրագրային մոդուլի միջոցով այլ գերատեսչությունների հետ փոխանակվող տվյալների մոդուլը համաձայնեցնելու համար կազմակերպվել է ռեգիստրի ներակայացուցչի հանդիպում ՖԴԿ-ի ներկայացուցիչների հետ:

Գործակալության կողմից իրականացվել են Հայաստանի Հանրապետության օրենքների, ՀՀ Կառավարության որոշումների նախագծերի ուսումնասիրություններ, եզրակացություններ են տրամադրվել շահագրգիռ մարմիններին և անձանց:

Գործակալությունում ստացվել է 8 քաղաքացիական (որպես երրորդ անձ) և 10 վարչական գործերով հայցադիմումներ, որոնց օրենքով սահմանված ժամկետներում տրվել են համապատասխան գրավոր պատասխաններ, վարչական գործերով հայցադիմումները և դատական ակտերը վերահասցեագրվել են օրինականության վերահսկողության տեսչություն, քաղաքացիական գործերով կատարվել են գրավոր միջնորդություններ, ինչպես նաև օրինական ուժի մեջ մտած վճիռներով կատարվել են պետական գրանցումներ: ԴԱՀԿ ծառայության կողմից ուղարկված որոշումներով պետական միասնական գրանցամատյանում համապատասխան նշումներ են կատարվել առևտրային կազմակերպությունների բաժնեմասերի վրա արգելանքներ դրված լինելու վերաբերյալ և արդյունքների մասին հայտնվել է ԴԱՀԿ ծառայությանը: 14 դիմում-բողոքների հիմքով հարուցվել են վարչական վարույթներ, անցկացվել են լսումներ, ընդունվել են համապատասխան վարչական ակտեր: Կատարվել է վերադասության կարգով վարչական բողոքի արդյունքում կայացված վարչական ակտի կատարում գործակալության կողմից, ինչպես նաև իրավասու մարմինների կողմից ուղղարկված արգելանքների, կալանքների հետ կապված գործողությունների կատարում և համապատասխան պատասխանների տրամադրում:

Հաշվետու ժամանակահատվածում իրավաբանական անձանց պետական ռեգիստրի գործակալությունը իրականացրել է www.azdarar.am կայք էջերի վարումը և հրապարակել է 18035 հայտարարություն:

Իրավաբանական անձանց պետական ռեգիստրի գործակալությունը իրականացրել է www.e-register.am կայք էջի վարումը, պարբերաբար փոփոխության է ենթարկվել www.e-register.am կայք էջը՝ տեղադրվել են գործակալության գործառույթներին վերաբերող ՀՀ կառավարության կողմից ընդունած որոշումները և հաստատված նոր կարգեր, ՀՀ Ազգային ժողովի կողմից ընդունած մի շարք օրենքներ, ինչպես նաև կատարվել են բազմաթիվ ուղղումներ Իրավաբանական անձնանց պետական միասնական գրանցամատյանում տեղադրված իրավաբանական անձնանց տվյալներում:

Քաղաքացիների սպասարկման որակը բարձրացնելու համար սպասարկման բաժնի աշխատողների հետ պարբերաբար անց են կացվել խորհրդատվություններ, սեմինարներ և սպասարկման բնագավառում բացահայտված թերությունների քննարկումներ, որոնց արդյունքում դրանց վերացման համար տրվել են համապատասխան հանձնարարականներ:

Գործակալության գործառույթներին առնչվող բոլոր գրությունների, իրավական ակտերի նախագծերի, վերաբերյալ սահմանված ժամկետներում ներկայացվել են պատասխաններ, առաջարկություններ և դիտողություններ: ՀՀ կառավարության, ՀՀ վարչապետի, ՀՀ արդարադատության նախարարի կողմից հաշվետու տարվա ընթացքում տրված բոլոր հանձնարարականները կատարվել են սահմանված ժամկետներում: